

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ 2014Թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Կոտայքի մարզի բնակչության թիվը 2014թ. հուլիսի 1-ի դրությամբ կազմել է 253800 մարդ, որը կազմում է հանրապետության ողջ բնակչության 8.4%-ը, որից 137800-ը քաղաքաբնակներ են (54.3%), 116000-ը՝ գյուղաբնակներ (45.7%):

2014թ. առաջին կիսամյակում մարզում ծնվածների թիվը կազմել է 1720 մարդ կամ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ 33-ով ավել, մահացածների թիվն ավելացել է 28-ով և կազմել 1225 մարդ: Բնական աճը կազմել է 495 մարդ:

Գրանցված ամուսնությունների թիվը նախորդ տարվա համեմատ ավելացել է 112-ով՝ կազմելով 873, ամուսնալուծությունների թիվն ավելացել է 49-ով՝ կազմելով 183:

2014թ. առաջին կիսամյակի ընթացքում մարզում թողարկվել է 68276.4 մլն. դրամի արդյունաբերական արտադրանք՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 66669.3 մլն. դրամի դիմաց կամ աճը կազմել է 2.4%: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճ է գրանցվել մշակող արդյունաբերության ոլորտում՝ շուրջ 1409.6 մլն. դրամի (3.5%), իսկ էլեկտրաէներգիայի արտադրության և հանքագործական արդյունաբերության ոլորտներում արտադրության ծավալները նվազել են՝ համապատասխանաբար 484.1 մլն. դրամի (2.3%) և 940.7 մլն. դրամի (51.3%) չափով: Աճ է արձանագրվել սննդի (1.7%), խմիչքների (6.5%), հիմնային մետաղների արտադրության (46.4%) բնագավառներում և նվազում դեղագործական ապրանքների (7.6%), այլ ոչ մետաղական արտադրատեսակների (13.1%) արտադրության բնագավառներում:

2014թ. առաջին կիսամյակում մարզում արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալը կազմել է 68279.4 մլն. դրամ նախորդ տարվա 66376.3 մլն. դրամի դիմաց կամ աճը կազմել է 2.9 %:

Արտադրանքի իրացման ծավալների մեջ 2014թ. հաշվետու ժամանակաշրջանում իրացումը ներքին շուկայում կազմել է 53026.0 մլն. դրամ, իսկ արտահանումը՝ 15253.4 մլն. դրամ, որից ԱՊՀ երկրներ է արտահանվել 13334.2 մլն. դրամի և այլ երկրներ՝ 1919.2 մլն. դրամի արտադրանք: 2014թ. առաջին կիսամյակում արտահանման ծավալը նախորդ տարվա համեմատ նվազել է 1.5%-ով:

մլն. դրամ

	2013թ. I կիսամյակ	2014 թ. I կիսամյակ	շեղում +/-	%
Թողարկված արտադրանքի ծավալը	66669.3	68276.4	1607.1	102.4
Արտադրանքի իրացման ծավալը	66376.3	68279.4	1903.1	102.9
Արտահանման ծավալը, որից՝	15484.7	15253.4	-231.3	98.5
ԱՊՀ երկրներ	13496.3	13334.2	-162.1	98.8
այլ երկրներ	1988.4	1919.2	-69.2	96.5

Մանրաձախ առևտրի շրջանառության ծավալը 2014թ. առաջին կիսամյակում կազմել է 18682.7 մլն. դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 931.5 մլն. դրամով կամ 4.8%-ով:

Բնակչությանը մատուցած ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ կազմել է 18132.3 մլն. դրամ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 10393.6 մլն. դրամի դիմաց կամ աճը կազմել է 74.4 %:

2014թ. առաջին կիսամյակում իրացվել է 3.6 հազ. տոննա միս նախորդ տարվա 3.5 հազ. տոննայի դիմաց: Հաշվետու ժամանակաշրջանում արտադրվել է 35.7 հազ. տոննա կաթ (նախորդ տարվա համեմատ աճել է 6.0 %-ով) և 68.0 մլն. հատ ձու (կազմել է նախորդ տարվա 99.2%):

2014թ. առաջին կիսամյակի ընթացքում մարզում կատարվել են 7708.2 մլն. դրամի կապիտալ ներդրումներ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պակաս է 3106.6 մլն. դրամով և կազմում է հանրապետությունում իրականացված կապիտալ ներդրումների 6.1%-ը:

2014թ. հուլիսի 1-ի դրությամբ գրանցված գործազուրկների թիվը կազմել է 6200 մարդ, որը նախորդ տարվա համեմատ ավել է 600-ով: